

Մանր եղջերավոր անասունների և տավարի մոնեզիոզներ

Հիվանդության բնորոշումը. Մոնեզիոզները Հայաստանում ամենատարածված մանր եղջերավոր անասունների և տավարի ճիճվային հիվանդություններից են:

Հիվանդանում են 1.5-8 ամսական գառները և ուլերը: Հիվանդությունը ընթանում է մասսայական ձևով, այսինքն, եթե ֆերմայում կամ տարածաշրջանում առկա է հիվանդությունը, վարակվում է անասնազլխաքանակի մինչև 90%-ը: Կենդանիների վարակման աղբյուր են հանդիսանում տզերը: Վարակը տարածվում է արածելուց, երբ կենդանին խոտի հետ կուլ է տալիս հարուցիչ ձվերով վարակված տզերին:

Կլինիկական նշանները. Վարակումից 28-38 օր անց կենդանիները սկսում են նիհարել, դառնում են ընկճված և սակավաշարժ, նկատվում է պարբերական փորլուծ: Կղանքը պարունակում է հարուցիչ ամբողջական հատվածներ, մազը կամ բուրդը կորցնում է իր փայլը և էլաստիկությունը: Ժամանակին ճիճվաթափություն չիրականացնելու դեպքում կենդանին կարող է սատկել՝ հարուցիչներով աղիքների խցանման կամ էլ ոլորման հետևանքով:

Կանխարգելումը. Քանի որ մոնեզիոզով վարակումից շատ դժվար է խուսափել, ամենաարդյունավետ միջոցը կանխարգելիչ ճիճվաթափումն է, որի արդյունավետության համար այն պետք է իրականացնել երեք փուլով.

- առաջին անգամ կատարում են գառներին արոտավայր քշելուց 14-15 օր անց,
- երկրորդ անգամ՝ առաջինից 15-20 օր անց,
- երրորդ անգամ՝ երկրորդից 25-30 օր անց:

Բուժումը. Ինչպես արդեն նշվել է, ավելի արդյունավետ է իրականացնել կանխարգելիչ ճիճվաթափում, քան բուժել արդեն հիվանդ կենդանուն: Ընդ որում գառներին և ուլերին կանխարգելիչ ճիճվաթափում չիրականացնելու դեպքում արոտավայր հանելուց հետո անկումը կարող է հասնել մինչև 50%-ի:

Մոնեզիոզի բուժումը իրականացվում է հետևյալ ճիճվամուղ դեղամիջոցներով:

1. Ալբեն- բուժիչ՝ 1 հաբը 45 կգ, կանխարգելիչ՝ 1 հաբը 70 կգ կենդանի քաշին:
2. Արդյունավետ են իվերմեկ պրեպարատի (0.5մլ 25 կգ կենդանի քաշին) ներարկումները: